



Նոր

ՃՐԱԳ



Թ.Տարի : Թիւ 4 Եռամսեայ թերթիկ
Հոկտեմբեր 2023
Հրատարակութեամբ
Հ.Մ.Ը.Մ. Այնեօ Մեկուսի շրջանի վարչութիւն



Մրուօթիւն Պատմական Լրատու Սկաուտական Մարզական **ՄԱՐԶԻԿ**

Տուն / Լրատու / Այսօր

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ՄԱՐԶԻԿ 43-րդ տարի, Թիւ 429

-Խմբագրական- Նպատակը
-ՀՄԸՄ-ի երիտասարդական երկրորդ համագումարը որոնեց 18-35 տարեկան միութենականներու համար նոր գործադաշտերու ստեղծման կարելիութիւնները
-Երիտասարդութիւնը կապուած պահել միութեան եւ ազգին- Վ. Նաճարեան
-ՀՄԸՄ-ը սերունդներու հոգեմտաւոր եւ ազգային արժէքներով դարբնումի դպրոց է- Ս. Տէմիրճեան
-Ձեր մէջ թող վերապրի եւ վերաթարմանայ հայկականութեան զգացումը- Խորէն Արք. Տողրամանեան
-Ուղղուի՞նք միշտ յառաջ- Ռազմիկ Արամեան
-Համա-արարական սկաուտական առաջին ճամբարի մասնակցութիւն (Բ.)- Յարութ Զեքիճեան
-Վկայութիւններ ՀՄԸՄ-ի ֆութթոլի փառաւոր անցեալէն (Գ.)- Ծորճիկ Ռասուկէլէնեան
-Թիւր կ'ընդգրկէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական կեանքի անդրադարձներ (Արցախ, Հայաստան, Գահիրէ, Սուրիա, Լիբանան, Ամնիէն, Շուէտ, Երուսաղէմ, Արեւմտեան Մ. Նահանգներ, Գանատա, Յունաստան): 88 էջ:





Միություն Պատմական Լրատու Սկստական Մարզական **ՄԱՐԻԿ**

Տուն / Լրատու / Այսօր

ԳՐԻԳՈՐ ՄԱԼԷՉԵԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԷ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄՔ»Ի 2000 ՆԿԱՐՆԵՐՈՒ ԻՐ ՄԵԾԱՐԺԷՔ ՀԱԲԱՔԱԾՈՆ



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչությունը ուրախությամբ կը տեղեկացնէ, թէ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Գրիգոր Մալեզեան, Թորոնթոյէն, Գանատա, միութեան «Վարդգէս Տէր Կարապետեան» թանգարանին նուիրած է Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի 100 տարուան պատմութիւնը վաւերագրող (1912-2012) երկու հազար նկարներու իր մեծարժէք հաւաքածոն:

Նկարները դասաւորուած են կաշեպատ երեք մեծ արկումներու մէջ: Բոլորը կը գտնուին լաւ վիճակի մէջ, ժամանակագրական կարգով, թուականներու եւ համապատասխան բացատրութիւններու արձանագրութեամբ: Արկումները կ'ընդգրկեն նաեւ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի կարգ մը հրատարակութիւնները, ինչպէս՝ եգիպտահայ Ժ., ԺԱ., ԺԲ. եւ ԺԵ. արթերթիկ մրցումներու (1956, 1957, 1958, 1962) պոռտիւրները:

Եղբ. Գրիգոր Մալեզեան 1964-1965 թուականներուն եղած է Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի սկստական պատասխանատուն: Հետագային ան հաստատուած է Թորոնթո, Գանատա: Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի 100-ամեակին առիթով, եղբայրներ Հրայ Տէր Սարգիսեանի եւ Յարութիւն Մաթեոսեանի հետ ան մաս կազմած է յոբելեար մասնաճիւղի Յուշամատեանի Յանձնախումբին: Յուշամատեանը հրատարակուած է 286 էջով եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան առաջնորդող խօսքով:

Պատմական լուսանկարներու հաւաքածոյին ստանձնման առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը գնահատագիրով մը պատուեց եղբ. Գրիգոր Մալեզեանը: Վարձքը կատար իր երկար տարիներու երախտաշատ աշխատանքին համար: Ծնորհակալութիւն Լիբանանի Ծրջանէն եղբ. Հրանդ Պետրոսեանին, որ իբրեւ կապ, կարելոր ներդրում ունեցաւ այս նկարներու յայտնաբերման, Հ.Մ.Ը.Մ.ի թանգարանին նուիրման եւ Լիբանան փոխադրութեան աշխատանքին մէջ:





Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկսատական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Սյոսթ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՔԱՏՐԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԵՄԻՆԱՐԸ ԱԲԱՐՏԵՑԱԲ

Ամսուան մը վրայ երկարած առցանց չորս հանդիպումներէ ետք, Շաբաթ, 1 Յուլիսին աւարտեցաւ միութեան քարոզչական քատրերու պատրաստութեան նպատակով Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին կազմակերպած սեմինարը, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ կառոյցի աւելի քան 50 ներկայացուցիչներու:

Սեմինարին չորրորդ եւ վերջին հանդիպումին բացումը կատարեց եւ ներկաները ողջունեց քարոզչական յանձնախումբի անդամ քոյր Նորա Բարսեղեան: Օրուան գեկուցաբերն էր եղբ. Գեորգ Յակոբճեան: Ան ներկայացուց «Ընկերային ցանցերու աշխարհը եւ հոն տեղադրուելիք նիւթերու եւ նկարներու ընտրութիւնը» նիւթը:

Եղբ. Յակոբճեան նախ պարզեց ընկերային ցանցերու առնչուած վիճակագրական տուեալներ, որոնք իբրեւ գիտական հիմք ծառայեցին իր նիւթին յաջորդող հանգրուաններուն: Վիճակագրական տուեալներուն առնչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի քարոզչական աշխատանքներուն հետ վերլուծելէ ետք, եղբ. Յակոբճեան ճշդեց ընկերային ցանցերու գործածութեան ռազմավարական ուղղութիւնները՝ կեդրոնանալով յստակ նպատակներ որդեգրելու, զանոնք իրականացնելու յստակ ծրագիր մշակելու, մարդու ժ տրամադրելու եւ թիրախային զանգուածներ նկատի ունենալու կարելորութեան վրայ: Ապա, ան շեշտեց Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն, անդամներուն եւ համակիր զանգուածին ծառայող ընկերային ցանցերու ճիշդ հարթակներ ընտրելու, հայալեզու եւ բազմալեզու բովանդակութիւն եւ մարտավարութիւն զարգացնելու, ցանցերուն cyber անվտանգութիւնը ապահովելու, արխիւ պահելու, միութեան հանրաճանաչութեան եւ հեղինակութեան ամրապնդման գծով բժախնդի մօտեցում ցուցաբերելու անհրաժեշտութիւնը:

Ռազմավարական ընդհանուր ուղղութիւններ ճշդելէ ետք, եղբ. Յակոբճեան օրինակներով եւ գործնական մատնանշումներով անդրադարձաւ ընկերային ցանցերու վրայ ազդեցիկ եւ գրաւիչ քարոզչութիւն եւ հաղորդակցութիւն կատարելու հանգրուաններուն, օրէնքներուն, բովանդակային ոլորտներուն, ձեւերուն, նրբութիւններուն եւ հմտութիւններուն: Աւարտին, ան պատասխանեց սեմինարի մասնակիցներու հարցումներուն:





Հ.Ս.Ը.Ս.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միութիւն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

Համա-Հ.Ս.Ը.Ս.ական 12-րդ բանակումի նախապատրաստական աշխատանքներ « լուսանկարներ»





Հ.Ս.Ը.Ս.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Լրատու

Սկստական

Մարզական

ՄԱՐԶԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

17 Յուլիս

ԱՅՍ ՇԱԲԱԹԱՎԵՐՋԻՆ ՀԱՄԱ-Հ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԲԱՑՈՒՄԸ ԲԻՒՐԱԿԱՆԻ ՄԷՋ



Այս շաբաթավերջին, Բիւրականի «Գառնիկ Մկրտիչեան» բանակավայրին մէջ տեղի կ'ունենայ համա-Հ.Ս.Ը.Ս.ական 12-րդ բանակումին բացումը, մասնակցութեամբ միութեան Շրջանային եւ Մեկուսի շրջաններէն 750 սկաուտներու: Բանակումին հիւրաբար կը մասնակցին Իրանի «Արարատ», «Սիփան» եւ «Նայիրի» միութիւններու սկաուտական պատուիրակութիւնները:

Համա-Հ.Ս.Ը.Ս.ական բոլոր նախաձեռնութիւններու նման, սկաուտական բանակումը եւս տարիով մը յետաձգուեցաւ քորոնայի համաճարակին պատճառով: Համա-Հ.Ս.Ը.Ս.ական վերջին բանակումը կատարուած էր միութեան 100-ամեակի տօնակատարութիւններու սեմին, Յուլիս 2018-ին:

Համա-Հ.Ս.Ը.Ս.ական 12-րդ բանակումը տեղի կ'ունենայ 21-30 Յուլիս 2023, Բիւրական, Հայաստան: Բանակումի նախօրեակին, Հինգշաբթի, 20 Յուլիսին, Հ.Ս.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.-ի Երեւանի գրասենեակին մէջ կը կազմակերպուի մամոյ ասուլիս՝ ծանօթացնելու համար բանակումին աշխատանքները: Մամոյ ասուլիսը ուղղակի կը սփռուի Հ.Ս.Ը.Ս.ի դիմատետրի էջով:

Բանակումը իր աշխատանքներուն բացումը կը կատարէ Ուրբաթ, 21 Յուլիսին: Օր մը ետք, Շաբաթ, 22 Յուլիսին, բանակողները Երեւանի մէջ կը կատարեն շքերթ եւ կ'այցելեն Մեծ Եղեռնի նահատակաց Ծիծեռնակաբերդի յուշահամալիր: Պատուիրակութիւններու պատասխանատուներ կ'այցելեն նաեւ Եռաբլուրի Արցախեան նահատակաց պանթէոն:

Բանակումը հարուստ է սկաուտական յայտագիրներով եւ խաղերով: Օր մը նախատեսուած է մասնակից պատուիրակութիւններու երկիրներու մշակոյթներուն ներկայացման համար: Նախատեսուած է նաեւ «Homenetmen got talent»-ի մրցում մը: Շրջապտոյտներ կազմակերպուած են դէպի Մեւանայ լիճ եւ Կիւմրի: Յայտագիրի վրայ է յեղափոխական երգերու երեկոյ մը՝ Լիզպոնի գործողութեան 40-ամեակի օրը, 27 Յուլիս 2023-ին:

Բանակումին փակումը նախատեսուած է Շաբաթ, 29 Յուլիսին, յատուկ խարուկահանդէտով եւ ծնողներու բանակավայր այցելութեամբ: Փակման հանդիսութեան կը կատարուի միութեան սկաուտական բարձրագոյն կարգի՝ «Արարատեան» դասընթացքի թեկնածուներուն կարգի տուչութիւնը յատուկ փողկապով եւ հաստատագիրով, պաշտօնական հանդիսութեամբ: Բանակումին գլխաւոր աշխատանքները ուղղակի կը սփռուին Հ.Ս.Ը.Ս.ի դիմատետրի էջով:

Համա-Հ.Ս.Ը.Ս.ական 12-րդ բանակումին նշանաբանն է «Խրոխտ, խիզախ, միշտ պատրաստ»: Բանակումը ունի իր խորհրդանշանը (հեղինակ՝ եղբ. Յովիկ Փամփալեան, Սուրիայէն) եւ քայլերգը (խօսք եւ երաժշտութիւն՝ եղբ. Ակուսթին Անալեանի, Հարաւային Ամերիկայէն):

Բանակումին ընդհանուր խմբապետն է եղբ. Պօղոս Մահպուլեան՝ Հ.Ս.Ը.Ս.-Ֆրանսէն, փոխ խմբապետներն են՝ եղբ. Գեորգ Օհանեան Հայաստանէն եւ քոյր Շարլին Գեոգալեան՝ Արեւմտեան Մ. Նահանգներէն: Բանակումին խմբապետական գործադիր կազմը բաղկացած է հետեւեալներէն.- քոյրեր Թամար Բէշիշեան (Լիբանան), Մենար Պոյաճեան (Միւնիխ), եղբայրներ Յովիկ Փամփալեան (Սուրիա), Արամ Գայսերեան (Արեւելեան Մ.Ն.), Ակուսթին Անալեան (Հարաւային Ամերիկա), Գրիգոր Տուլգարեան (Հ.Ս.Ը.Ս.-Հ.Ա.Ս.Կ.) եւ Աւագ Կարապետեան (Քուէյթ):

Յայտնենք, որ այս տարի կը նշուի համա-Հ.Ս.Ը.Ս.ական բանակումներու 45-ամեակը: Համա-Հ.Ս.Ը.Ս.ական առաջին բանակումը տեղի ունեցած է 1978-ին:

Համա-Հ.Ս.Ը.Ս.ական առաջին չորս բանակումները կատարուած են Հայաստանէն դուրս՝ Յունաստան (1978, 1990), Ֆրանսա (1980) եւ Անգլիա (1986): Հայաստանի վերանկախացումէն ետք, 1994-էն սկսեալ, եւ չորս տարին անգամ մը, անոնք կազմակերպուած են Հայաստանի մէջ

20 Յուլիս

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԾԱՆՕԹԱՑՄԱՆ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ



Հինգշաբթի, 20 Յուլիսի առաւօտեան ժամը 11.30-ին, Հ.Մ.Ը.Մ.- ՀԱՄԱ-ի Երևանի գրասենեակին մէջ տեղի ունեցաւ համա- Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումին ծանօթացման մամուլի ասուլիսը, որուն ներկայ գտնուեցան հայրենի լրատուամիջոցներու ներկայացուցիչներ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ եղբայրներ Վաչէ Նանարեան, Դաւիթ Յակոբեան, Ֆէտի Խաժակ Գազանճեան եւ քոյր Թային Օրտոդեան:

Մամուլի ասուլիսին խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Դաւիթ Յակոբեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-ի վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Պօղոս Մահպուլեան:

Եղբ. Դաւիթ Յակոբեան ողջունեց ներկայ թղթակիցները եւ ծանօթացուց մամուլի ասուլիսին մասնակից պատասխանատուները: Ապա, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-ի ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան խօսեցաւ բանակումի նախապատրաստական աշխատանքներուն մասին:

Ան ըսաւ, որ աշխատանքները Բիւրականի եւ Երևանի մէջ ընթացք առած են վեց ամիսէ ի վեր: «Գառնիկ Մկրտիչեան» սկաւուտական բանակավայրը ենթարկուած է վերանորոգման եւ այժմ պատրաստ է ընդունելու աշխարհի գանազան երկիրներէն ժամանող Հ.Մ.Ը.Մ.ականները: Քոյր Սանտրա Վարդանեան շնորհակալութիւն յայտնեց Արագածոտնի մարզի շտապ օգնութեան բաժանմունքի պատասխանատուներուն եւ ոստիկանութեան, որոնք իրենց աջակցութիւնը կը ցուցաբերեն բանակումին յաջողութեան: Ան նաեւ նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. ուրախութեամբ կը հիւրընկալէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկները (մարզախաղեր, բանակումներ)՝ այդ նպատակին համար զօրաշարժի ենթարկելով իր շարքերը: Վերջապէս, քոյր Սանտրա Վարդանեան տեղեկացուց, որ բանակումը պիտի ունենայ ազգային մշակութիւններու նուիրում օր մը, որուն ընթացքին բանակավայր պիտի այցելեն ֆիզիքական եւ մտային յատուկ խնամքի կարօտ՝ «Հրաշք» բաժանմունքի պատանիները:

Ասուլիսին երրորդ խօսքը արտասանեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Պօղոս Մահպուլեան: Ան յայտնեց, որ բանակումը պիտի ունենայ 750 մասնակից եւ 10 հոգինոց խմբապետական ընդհանուր եւ գործադիր կազմ: Բանակումին պաշտօնական բացումն ու փակումը պիտի կատարուին 21 եւ 29 Յուլիսին, իսկ Շաբաթ, 22 Յուլիսի յետմիջօրէին, բանակողները հայրենի հայրութեան պիտի ներկայանան պաշտօնական շքերթով, որ ընթացք պիտի առնէ Օփերայի «Ազատութեան» հրապարակէն եւ պիտի երկարի մինչեւ «Շահումեան»ի հրապարակ, ուրկէ անոնք փոխադրակառքերով պիտի ուղղուին Ծիծեռնակաբերդ՝ յարգանքի իրենց տուրքը մատուցելու Հայոց Յեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակներուն: Պաշտօնական խօսքերէն ետք, ասուլիսին մասնակիցները պատասխանեցին ներկայ թղթակիցներու հարցումներուն:

Յայտնենք, որ վաղը՝ Ուրբաթ, 21 Յուլիսի կէսօրէ ետք ժամը 6-ին (Երևանի ժամանակացոյցով), համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումին աշխատանքները ընթացք կ'առնեն բացման յատուկ հանդիսութեամբ, որ կը սփռուի միութեան դիմատետրի էջով (Homenetmen-ՀՄԸՄ):





Հ.Ս.Ը.Ս.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն Պատմական Լրատու Սկսուտական Մարզական **ՄԱՐԶԻԿ**

Տուն / Լրատու / Այսօր

12 Յուլիս

ՀՄԸՄ-Ի ԱՐՑԱԽԻ ՄԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԵԱՄԲ՝ ՀԱՄԱ-ՀՄԸՄ-ԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԲԱՑՈՒՄԸ՝ «ԽՐՈՒՄՏ, ԽԻՉԱԽ, ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ» ՆՇԱՆԱԲԱՆՈՎ



Տարուան մը ականայ ուշացումով, Ուրբաթ, 21 Յուլիսի երեկոյեան ժամը 6.15-ին (Երեւանի ժամանակացոյցով), Բիւրականի «Գառնիկ Մկրտիչեան» սկաուտական բանակավայրին մէջ ընթացք առաւ համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումը՝ բացման արարողութեամբ մը, որուն ներկայ գտնուեցան ՀՅԴ Բիւրոյի անդամ Արսէն Համբարձումեան, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Մաղաթելեան, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նաճարեան, անդամներ՝ Դաւիթ Յակոբեան, Օշին Փիրումեան, Տիրան Վահրատեան, Ֆէտի Խաժակ Գազանճեան եւ քոյր Թալին Օրտողեան: Ներկայ էին նաեւ ՀՄԸՄ-ՀԱՄԱ-ի վարչութեան անդամներ, ինչպէս նաեւ՝ Հայաստանի մէջ Իրաքի եւ Պուլկարիոյ դեսպաններու ներկայացուցիչներ:



Բացման արարողութիւնը ընթացք առաւ բանակողներու հանդիսաւոր կերպով բանակավայր մուտքով: ՀՄԸՄ-ի Շրջանային եւ Մեկուսի 30 շրջաններէ եւ Իրանի «Արարատ», «Միլիան» եւ «Նայիրի» միութիւններէն 750 բանակողներ կարգապահ շարքերով իրենց տեղերը գրաւեցին դրօշակի կայմերուն դիմաց: Չգալի էր ՀՄԸՄ-ի Արցախի սկաուտներուն բացակայութիւնը: Բոլորը միտքով ու հոգիով այդ պահուն բանակումէն զրկուած Արցախի սկաուտներուն հետն էին:

Տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն: Հայաստանի, Արցախի, ՀՄԸՄ-ի սկաուտական եւ բանակումի քայլերգներով բարձրացան Հայաստանի, միջազգային սկաուտութեան եւ բանակումի մասնակից շրջաններու երկիրներուն դրօշները: Հանդիսութիւնը վարեց բանակումի հերթապահ եղբ. Արամ Գայսէրեան, Արեւելեան Մ. Նահանգներէն:

ԲԱՆԱԿՈՒՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏԻՆ ԽՕՍԸԸ

Բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Պօղոս Մահպուլեան իր խօսքին սկիզբը անդրադարձաւ վերջին չորս տարին աշխարհը եւ հայ կեանքը հարուածած տագնապներուն: Ան նշեց քորոնայի համաճարակը, Արցախեան 44-օրեայ պատերազմը եւ ՀՄԸՄ-ական վաստակաւոր անդամներու կորուստը: Եղբ. Մահպուլեան անդրադարձաւ նաեւ բանակումէն Արցախի սկաուտներու բացակայութեան երեւոյթին եւ ըսաւ. «Դժբախտաբար, այսօր մեզի հետ չեն մեր շատ սիրելի ՀՄԸՄ-ի Արցախի տարագուորները, որոնք անհամբեր կը սպասէին միանալու, ծանօթանալու եւ յիշատակելի պահեր ապրելու մեր բոլորին հետ: Անոնք ականայ բացակայ են, որովհետեւ 12 Դեկտեմբեր 2022-էն ի վեր շրջափակուած են եւ ծանր պայմաններու տակ կը փորձեն ապրիլ եւ գոյատևել: Թէեւ ֆիզիքապէս իրենց հետ չենք, բայց իրենց ապրած դժուար պայմանները կ'ապրինք հոգեպէս»:

Ապա, բանակումի ընթացքին մասին խօսելով, եղբ. Պօղոս Մահպուլեան ծանօթացուց ընդհանուր յայտագիրը եւ ըսաւ. «Միասնաբար պիտի անցընենք անմոռանալի օրեր, կազմենք յիշատակներ, որոնք մեզի պիտի ընկերակցին տարիներ: Մենք՝ խմբապետական կազմ եւ գործադիր մարմին, ՀՄԸՄ-ՀԱՄԱ-ի օժանդակութեամբ եւ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան հովանաւորութեամբ մեր լաւագոյնը ըրած ենք եւ պիտի ընենք, որպէսզի համա-ՀՄԸՄական 12-րդ բանակումը եւս ոսկեայ տառերով արձանագրուի ՀՄԸՄ-ի պատմութեան մէջ»:



Հ.Ս.Ը.Ս.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Մոլդովի

Պատմական

Լրատու

Սկսանական

Մարզական

ՄԱՐԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

ՀՄԸՄ-ՀԱՄԿ-Ի ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ

ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի անունով խօսք առաւ վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան: Ան ըսաւ, որ ՀՄԸՄ-ի շնորհիւ Հայաստանի մէջ կրկին կը միաձուլուին Սփիւռքի եւ հայրենիքի սիրտերը: Մենք դարձեալ կարելիութիւն կ'ունենանք միասին անցընելու սկաուտական աւիւնով եւ հայրենասիրութեամբ լեցուն, ստեղծագործ օրեր: Այնքան ուրախալի է բանակավայրին մէջ տեսնել աշխարհի չորս անկիւններէն ժամանած ՀՄԸՄ-ական քոյրեր եւ եղբայրներ, որոնցմէ շատերը առաջին անգամ ըլլալով Հայաստան կ'այցելեն եւ այսուհետեւ իրենց հոգիին մէջ կը կրեն հայրենիքի լոյսն ու արեւը, համն ու հոտը, սէրն ու ջերմութիւնը:



ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի ատենապետը ցաւով անդրադարձաւ ՀՄԸՄ-ի Արցախի սկաուտներուն բանակումէն բացակայութեան երեւոյթին: Ան ըսաւ. «Թշնամական շրջափակումի պատճառով այսօր Արցախի մէջ ծանր իրավիճակ է: Կը սպառնին սննդեղէնի եւ կենսական անհրաժեշտութեան վերջին պաշարները: Այսօր, աւելի քան երբեք, Արցախը մեր սատարումին եւ օգնութեան կարիքը ունի: Երբ բանակումը աւարտի եւ բանակողները իրենց երկիրները վերադառնան, իւրաքանչիւրը թող պատմէ Արցախի մասին եւ ամէն միջոց ի գործ դնէ Արցախի փրկութեան համար: Փառք ու պատիւ այս օրերուն աննկուն պայքարի մէջ գտնուող ՀՄԸՄ-ական քոյրերուն եւ եղբայրներուն: Մեր խոնարհումը եւ յարգանքը իրենց: Մենք երբեք առանձին չենք ձգեր զիրենք»:



Այնուհետեւ, իր խօսքը ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի բանակողներուն ուղղելով, քոյր Սանտրա Վարդանեան ըսաւ. «Այսօր ձեր շարքերուն կրնային գտնուիլ մեր այն եղբայրները, որոնք նահատակուեցան յանուն հայրենիքի, յանուն Արցախի ազատութեան: Եւ այսօր մեր պարտքն է իրենց ոգեղէն ներկայութիւնը զգալ մեր կողքին, ընել կարելին՝ բանակումին պատշաճ կազմակերպման եւ իրագործման համար: Թող մեր եղբայրներու հոգին փառաւորուի մեր նուիրումի եւ ազնիւ աշխատանքի շնորհիւ»:

ԿԵՂՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ԽՕՍՔԸ

Յաջորդ խօսքը արտասանեց ՀՄԸՄ-ի Կեղրոնական Վարչութեան սկաուտականի ներկայացուցիչ քոյր Թալին Օրտողեան: Ան նկատել տուաւ, որ «Նշանաբանները երբեք պատահական ընտրութեան արդիւնք չեն եղած, որովհետեւ անոնք իրենց մէջ խտացուցած են իւրաքանչիւր բանակումի նպատակը»: Քոյրը ներկայացուց բանակումին նշանաբանը՝ «Խրոխտ, խիզախ եւ միշտ պատրաստ»ը եւ փոխանցեց անոր իմաստն ու խորհուրդը.



«Խրոխտ է ՀՄԸՄ-ական սկաուտը, երբ հպարտութեամբ կը տողանցէ հայրենիքէն դուրս, կամ Երեւանի պողոտաներուն վրայ: Խիզախ է ՀՄԸՄ-ական սկաուտը. փաստը՝ բանակավայրին մէջ ծաղկող «Խիզախներու Պուրակ»-ն է, որ խորհրդանիշն է գերագոյն քաջութեան եւ անձնագոհութեան երիտասարդ ՀՄԸՄ-ականներու, որոնք արիաբար նետուեցան հայրենիքի պաշտպանութեան սրբազան գործին՝ դառնալով գերագոյն գոհողութեան օրինակելի տիպարները: Միշտ պատրաստ է ՀՄԸՄ-ական սկաուտը: Պատրաստ է ծառայելու, պատրաստ է օգնելու, պատրաստ է աշխատելու»:



Հ.Մ.Ը.Մ.
Հայ Մարմնակրթական
Ընդհանուր Միություն

Միություն

Պատմական

Երատու

Սկաուտական

Մարզական

ՄԱՐԻԿ

Տուն / Լրատու / Այսօր

Այս, քոյր Թային Օրտոդոքս արտայայտուեցաւ համա-ՀՄԸՄ-ական բանակումներու կարեւորութեան մասին եւ շեշտեց, որ «համա-ՀՄԸՄ-ական բանակումները կը պարգեւեն եզակի առիթը մէկտեղելու աշխարհի չորս ծագերէն հասած հարիւրաւոր սկաուտներ, որոնք թէւ զիրար չեն ճանչնար, սակայն ՀՄԸՄ-ի դրօշին ներքեւ անոնք կը բարեկամանան, կը մտերմանան եւ անբակտելի կապեր կը հաստատեն իրարու հետ. կապեր, որոնք կը մնան հաստատ՝ անտեսելով զիրենք բաժնող հազարաւոր մղոնները»:

Այս առիթով, իր խօսքը բանակողներուն ուղղելով, ան ըսաւ. «Միրելի՛ սկաուտներ, օգտուեցէ՛ք ձեզի ընծայուած այս եզակի առիթէն, որմէ գրկուած են ձեզի նման հազարաւոր հայ պատանիներ. ուրախութեամբ եւ հաճոյքով վայելեցէ՛ք այս անկրկնելի պահերը, եւ վերջապէս, հպարտութեամբ բարձրաձայնեցէ՛ք եւ գործի վերածեցէ՛ք համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումին նշանաբանը՝ «Խրոխտ, խիզախ, միշտ պատրաստ»ը»:



ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Բացման հանդիսութեան եզրափակիչ պատգամը արտասանեց ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նանարեան: Ան ըսաւ, որ «Այս բանակումը յատուկ նշանակութիւն ունի, որովհետեւ կը կազմակերպուի քորոնայի պարտադրած սահմանափակումներէն ետք եւ համաշխարհային քաղաքական, ընկերատնտեսական բարդ պայմաններու մէջ, եւ մանաւանդ՝ մեր հայրենիքի մէկ անբաժան մասնիկը կազմող Արցախի տակաւին շարունակուող շրջափակման պայմաններուն մէջ: Արդ, բանակումը կը նշէ հայ ժողովուրդի միասնականութեան, քաջութեան եւ պատրաստակամութեան ոգին, որուն լաւագոյն կրողները կը հանդիսանան Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները»:



Եղբ. Վաչէ Նանարեան համա-ՀՄԸՄ-ական բանակումներու պատմութեան անդրադառնալով յայտնեց, որ այս տարի համա-ՀՄԸՄ-ական բանակումները կը բոլորեն իրենց 45-ամեակը: Համա-ՀՄԸՄ-ական առաջին բանակումը տեղի ունեցած է 1978-ին, Յունաստան, 226 մասնակիցներով: Այս տարի կը լրանայ նաեւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու Հայաստանի մէջ կազմակերպման 29-ամեակը, տրուած ըլլալով որ միութիւնը համա-ՀՄԸՄ-ական իր բանակումները մայր հայրենիքի մէջ կը կատարէ 1994-էն ի վեր: Յարդ կատարած է 8 բանակումներ, 6-ը իր սեփական բանակավայրին մէջ, որ 30 Հոկտեմբեր 2021-էն ի վեր ստացած է «Գառնիկ Մկրտիչեան» սկաուտական բանակավայր անունը, ի յիշատակ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երախտաշատ նախկին ատենապետին, որ մեծ ներդրում ունեցաւ բանակավայրին ընդարձակման, վերանորոգման աշխատանքներուն եւ վերջին քանի մը բանակումներու կազմակերպման մէջ:



Մրույթներ Պատմական Լրատու Սկսուողական Մարզական **ՄԱՐԶԻԿ**

Տուն / Լրատու / Այսօր

Կեդրոնական Վարչության ատենապետը իր խօսքին մէջ յատուկ ողջոյն յղեց բանակումի մասնակցութեան կարելիութենէն զրկուած ՀՄԸՄ-ի Արցախի սկաուտներուն, երբ ըսաւ. «Արցախի ՀՄԸՄ-ական սկաուտները սկզբունքով այսօր մեզի հետ հոս պէտք է ըլլային, սակայն մեզի հետ չեն ֆիզիքապէս: Մենք վստահ ենք, սակայն, որ անոնք մեզի հետ են հոգեպէս, միտքով ու հոգիով, ինչպէս որ Արցախը ներկայ է հոս գտնուող իւրաքանչիւր բանակողի հոգիին ու սրտին մէջ: Մեր զօրակցութիւնը Արցախին եւ ՀՄԸՄ-ի Արցախի մասնաճիւղի սկաուտներուն: Յոյսով ենք, որ արգելքները շուտով կը վերանան եւ մենք կը հանդիպինք դարձեալ»:



Այնուհետեւ, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչության ատենապետը խօսեցաւ սկաուտութեան ներկայացուցած կարելորութեան մասին եւ հաստատեց, որ «ՀՄԸՄ-ի սկաուտութիւնը միշտ եղած է բարի ուժ՝ նպաստելով այն գաղութներուն, ուր կը գործէ ան, նպատակ ունենալով հայրենիքը, եւ օրինակ ունենալով հայ գիտակից եւ տիպար քաղաքացին, հայրենիքէն ներս թէ դուրս, բայց միշտ՝ հայրենիքի շունչով»: Ուստի, իր խօսքը բանակող սկաուտներուն ուղղելով, ան ըսաւ. «Այս բանակումին նշանաբանը՝ «Խրոխտ, խիզախ, միշտ պատրաստ»-ը մարմնաւորելով դուք պարտականութիւնը ունիք զօրացնելու Մփիւռքի մեր գաղութները: Ձեր նպատակը պիտի ըլլայ ոգեշնչել ուրիշները՝ հետեւելու ձեր առաջնորդութեան եւ գործօն ըլլալ՝ հասնելու համար ձեր նպատակին: Յոյց տուէք քաջութիւն՝ պաշտպանելու ճիշդը, հպարտացէք ձեր ժառանգութեամբ եւ միշտ պատրաստ եղէք օգնութեան ձեռք երկարել կարիքաւորին, հաւատարիմ՝ սկաուտական ձեր դաւանանքին եւ երդումին: Դ՛ուք, նոր սերունդի ներկայացուցիչներ, ձեր նախնիներու նման, կրնաք ըլլալ դրական փոփոխութիւններու հզօր ուժ՝ հայ ժողովուրդի գոյատեւման ճամբուն վրայ»:



Իր պատգամին աւարտին, Կեդրոնական Վարչության ատենապետը պաշտօնապէս բացուած յայտարարեց համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումը եւ յաջողութիւն մատչեց բանակումի աշխատանքներուն: Հուսկ, բացման արարողութիւնը աւարտեցաւ ՀՄԸՄ-ի «Յառաջ նահատակ» քայլերգով:



23 Յուլիս

ՀԱՄԱ-ՀՄԸՄ-ԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ ԶԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔԸ ԵՌԱԲԼՈՒՐԻ ԵՒ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՄԵՋ



Անցնող շաբաթավերջին, համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումը իր աշխատանքները շարունակեց Բիւրականի մէջ, Հայաստան: Ծաբաթ, 22 Յուլիսի յետմիջօրէին, բանակումի 750 մասնակիցները այցելեցին Երևան եւ ծանօթացան մայրաքաղաքի տեսարժան վայրերուն:

Ապա, պատուիրակութիւններու պատասխանատուները մեկնեցան Արցախեան պատերազմներու նահատակաց պանթէոն Եռաբլուր:

ԵՌԱԲԼՈՒՐԻ ՄԵՋ

Եռաբլուրի մէջ, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներու եւ բանակումի խմբապետական կազմի առաջնորդութեամբ, սկաուտ պատասխանատուներ յարգանքի իրենց տուրքը ընծայեցին հայ ժողովուրդի վերջին 35 տարուան նահատակներուն, Արցախի համար իրենց կեանքերը զոհաբերած նուիրեալներուն:



ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը յիշատակի եւ ոգեկոչման ծաղկեպսակ մը զետեղեց «Անձանօթ զինուոր»ի յուշակոթողին առջեւ, ուր բանակողներուն անունով խօսք առաւ եղբ. Ծահան Աթմանեան:



Եղբ. Ծահան Աթմանեան իր խօսքին մէջ ըսաւ, որ հայութիւնը իր հազարաւոր զաւակներու թանկ արեամբ ոռոգեց հայրենիքի դաշտերը, որպէսզի մնայ արժանապատիւ, Հայաստանը մնայ հայութեան, Արցախը չենթարկուի թշնամիի լուծին: Մեր պայքարի ուղին դժուար է: Մտածել որ դիւրին է, չարաչար սխալած կ'ըլլանք: Անհրաժեշտ է գիտակցիլ, որ հայրենիքը կարիքը ունի մեր բոլորին, որպէսզի մնանք քարտէսին վրայ եւ վերատիրանանք մեր իրաւունքներուն:



Ծարունակելով, եղբ. Ծահան Աթմանեան հաստատեց. «Մեզի համար Արցախը երբեք չի կրնար թշնամիներուն պատկանիլ: Արցախը ազատ ու անկախ պէտք է մնայ, որպէսզի մայր հայրենիքին միանայ: Ան պէտք է նորէն ծաղկի: Մենք համոզուած ենք, որ ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքը, հերոսներու ծնողները, հարազատները եւ ամբողջ հայութիւնը ո՛չ մէկ ձեւով պատրաստ է զիջելու իր հայրենիքին անվտանգութեան երաշխիք այդ հողամասը, եւ իր մէջ անմար կը պահէ հայութեան ու Հայաստանի ազատագրութեան պայքարի ջահը: Մեզի համար, Հայաստան, Արցախ, Ջաւախք, Սփիւռք միասին կը կազմեն մէկ ամուր բռունցք: Թող ոչ ոք կասկածի մեր ժողովուրդի հերոսական ուժին: Ան կրնայ կերտել նոր յաղթանակներ եւ հայութեան պարգևել լուսաւոր ժամանակներ»:

Եղբ. Ծահան Աթմանեանի խօսքէն ետք, Եռաբլուր այցելող համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումի պատուիրակութիւնը յարգանքի իր տուրքը ընծայեց ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ, Արցախեան առաջին պատերազմի նահատակ եղբ. Վարդան Բախշեանի շիրիմին: Տեղի ունեցաւ ծաղկեմատոյց եւ «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգում:

ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՇՔԵՐԹ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Երեւանի մէջ, երեկոյեան ժամը 7-ին, կազմակերպուեցաւ համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումի պաշտօնական շքերթը, առաջնորդութեամբ ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի սկաւուտական շեփորախումբին եւ մասնակցութեամբ բանակումի մասնակից պատուիրակութիւններուն:




Օփերայի «Ազատութեան» հրապարակէն ընթացք առած եւ «Արովեան» փողոցով, «Հանրապետութեան» հրապարակով մինչեւ «Ճահումեան»-ի հրապարակ երկարած շքերթը երկարեցաւ շուրջ մէկ ժամ: Տողանցեցին բանակումին խմբապետական ընդհանուր եւ գործադիր կազմերը, ապա բոլոր պատուիրակութիւնները՝ շրջաններու անուններու այբուբենական շարքով: Խրոխտ ու խիզախ բանակողներու առջեւէն տողանցեցին Հայաստանի, Արցախի, ՀՄԸՄ-ի, ՀՄԸՄ-ի սկաւուտութեան եւ համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումի դրօշները պարզած սկաւուտներ:



ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՄԷՋ

Երեւանի շքերթէն ետք, երեկոյեան ժամը 8-ին, համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումի մասնակիցները ուղղուեցան Հայոց Յեղասպանութեան նահատակներու



Ծիծեռնակաբերդի յուշահամալիր, ուր լուռ եւ կարգապահ շարքերով տողանցեցին մուտքէն մինչեւ անմար կրակին շուրջ առաջնորդող երթուղին: Այս առիթով, ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքին անունով, Կեդրոնական Վարչութիւնը գետեղեց ծաղկեպսակ մը, մինչ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նանարեան յարգանքի իր խոնարհումը ընծայեց մեր մէկուկէ միլիոն սրբադասուած նահատակներու յիշատակին:

Անմար կրակին շուրջ, սկաւուտներ կատարեցին ծաղկեմատոյց: Հոգեւոր հայրերու գլխաւորութեամբ կատարուեցաւ աղօթք եւ հոգեհանգստեան պաշտօն: Ապա, բանակումի խմբապետական գործադիր կազմին անունով խօսք առաւ եղբ. Ակուսթին Անապեան: Ան ըսաւ, որ յիշողութիւն կորսնցնելը վտանգաւոր է: Յիշողութեան կորուստը խոչընդոտ կը հանդիսանայ իրաւունքի յաղթանակին հասնելու համար, ու այդպիսով արդարութեան ջահը կը սկսի մարիլ: Ով որ չի գիտեր իր պատմութիւնը, դատապարտուած է կրկնելու անոր սխալները: Մեր ժողովուրդը քաջ գիտէ իր պատմութիւնը, սակայն այսօր կան որոշ ճիգեր, որոնք կը փորձեն սկարացնել մեր ժողովուրդին յիշողութիւնը: Եւ եթէ յիշողութիւնը ուժ չունի, մեր արդար պահանջները տեղ չունին: Ծարունակելով, եղբ. Ակուսթին խօսեցաւ ՀՄԸՄ-ի ազգային-պահանջատիրական դիմագիծին մասին եւ ընդգծեց. «Մենք հաստատ գետնի վրայ պիտի քայլենք, պիտի աշխատինք, պիտի բարձրանանք ու պիտի բարձրացնենք, որպէսզի պայքարը շարունակուի, որպէսզի մեր արդար իրաւունքներուն եւ նպատակներուն հասնինք: Որովհետեւ մենք Ծաւարշ Բրիսեանի



Մեր ժողովուրդը քաջ գիտէ իր պատմութիւնը, սակայն այսօր կան որոշ ճիգեր, որոնք կը փորձեն սկարացնել մեր ժողովուրդին յիշողութիւնը:



գաղափարականին ժառանգորդներն ենք: Որովհետեւ Յովհաննէս Հինդլեանի եւ Գրիգոր Յակոբեանի բարոյական եւ ազգային աւանդին շարունակողներն ենք: Եւ որովհետեւ մեր բառարանին մէջ «անկարելի» եւ «պարտութիւն» բառերը գոյութիւն չունին»:



Այսօրուան կացութեան անդրադառնալով, եղբ. Ակուսթին Անալեան շեշտեց, որ «Վտանգը այլեւս տեսանելի իրականութիւն է բոլորին համար: Թշնամին բոլոր միջոցներով որոշած է նոր հարուածով մը բնաջինջ ընել հայն ու Հայաստանը եւ համաթուրանական իր երազը իրականութիւն դարձնել»: Հետեւաբար, հաստատեց ան. «Իբրեւ ՀՄԸՄ-ի սկաւտներ, մենք խոստում եւ երդում տուած ենք ազգ ու հայրենիք պահպանելու, հայ մշակոյթը, լեզուն եւ ազգային նկարագիրը պահելու, տարածելու եւ զարգացնելու: Ուրեմն, մենք երբեք անտարբեր պիտի չմնանք այս կացութեան նկատմամբ եւ պիտի չհամակերպինք: Ազգային պահանջատիրական երթէն հրաժարումը, հայութեան արժէքային համակարգին տկարացումը եւ անտեսումը, ինչպէս նաեւ ազգային գաղափարախօսութեան քանդումի փորձերը մեր գործելակերպին մէջ տեղ պիտի չունենան»:



Եղբ. Ակուսթին Անալեան իր խօսքը եզրափակեց վստահեցնելով, որ «Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի ներուժին հաւաքագրումը, նորահաս սերունդներու ազգային կազմաւորումը կը շարունակեն ու պիտի շարունակեն մեզի համար մնալ մնայուն առաջադրանք եւ կարելոր ու անյետաձգելի աշխատանք»:

Խօսքէն ետք, բանակողները ազգային-հայրենասիրական երգերով հրաժեշտ տուին Ծիծեռնակաբերդին, հայութեան եւ Հայաստանին ծառայելու ՀՄԸՄ-ականի իրենց երդումը վերանորոգելով եւ ազգային մեր պահանջատիրութեան ջահը վառ պահելու աննկուն կամքով:



Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ Բանակում 2023 | Pan Homenetmen 12th Jamboree 2023 | #PHJ2023

31 Յուլիս

ՀԱՄԱ-ՀՄԸՄ-ԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ ԱՎԱՐՏԵՑԱԲ ՀԱՅՈՒԹԵԱՆ «ԽՐՈՒՏ, ԽԻՉԱԽ ԵՒ ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ» ԿԱՄԱԲՈՐ ԲԱՆԱԿԸ ՄՆԱԼՈՒ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՄԲ



Ինը օրուան սկաուտական յայտագիրներէ, մրցանքներէ, մշակութային ճոխ առօրեայէ եւ բանակավայրէն դուրս կատարուած այցելութիւններէ ետք, Շաբաթ, 29 Յուլիսի երեկոյեան ժամը 6-ին, Բիւրականի «Գառնիկ Մկրտիչեան» բանակավայրին մէջ իր աշխատանքները աւարտեց համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումը, յիշատակելի նոր էջ մը աւելցնելով 105-ամեայ ՀՄԸՄ-ի արդի պատմութեան մէջ:

Համա-ՀՄԸՄական 12-րդ բանակումին փակման հանդիսաւոր արարողութիւնը կատարուեցաւ ներկայութեամբ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նանարեանի, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Աւագեանի, Օշին Փիրումեանի, Դաւիթ Յակոբեանի, Արմանտ Քիլիճեանի, Ֆէտի Խաժակ Գազանճեանի եւ քոյր Թալին Օրտողեանի:

Իրենց ներկայութեամբ համա-ՀՄԸՄական բանակումի փակման արարողութիւնը պատուեցին «ՅԴ Բիւրոյի անդամ Կիրօ Մանոյեան, Համագայինի Կեդրոնական Վարչութեան անդամ Տիգրան Պապիկեան, Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան ատենապետ Սոֆի Զաղարբէկեան, ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային Վարչութեան ատենապետ քոյր Մարօ Քէշիշեան, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբայրներ Բագրատ Եսայեան եւ Իշխան Եղիայեան, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի ընտանեկան պարագաներ, ազգային բարերար Գաբրիէլ Չէմպէրճեան, ՀՄԸՄ-ի բարեկամներ եւ արտասահմանէն ժամանած մեծաթիւ ծնողներ:

Փակման արարողութիւնը ընթացք առաւ Հայաստանի եւ Արցախի քայլերգներուն կատարողութեամբ եւ բանակումի հերթապահ եղբ. Արամ Գայսերեանի ողջոյնի կարճ խօսքով:



ԲԱՆԱԿՈՒՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏԻՆ ԽՕՍԸԸ

Փակման արարողութեան առաջին խօսքը արտասանեց ընդհանուր խմբապետ եղբ. Պօղոս Մահպուլեան: Ան արժեւորումը կատարեց բանակումին իննօրեայ աշխատանքներուն եւ նշեց, որ այսուհետեւ բանակումին մասնակիցները կը պարտաւորուին իրենց յիշատակները եւ ՀՄԸՄ-ի վեհ նպատակը տարածել իրենց շրջաններուն մէջ:

Իր խօսքը բանակող սկաուտներուն ուղղելով, եղբ. Պօղոս Մահպուլեան ըսաւ. «ՀՄԸՄ-ի նպատակին անմար ջախը այս պահէն սկսեալ ձեզի կը փոխանցենք, որպէսզի ձեր կարգին շարունակէք երթը եւ զայն փոխանցէք յաջորդող սերունդներուն: Կը խորհինք թէ պիտի դառնաք արժանի յանձնառուները ձեզի տրուած այս իրաւունքին: Շարունակեցէ՛ք երթը ձեր անձնական երազները իրականացնելով, եւ թող ՀՄԸՄ-ի սկաուտական դաւանանքը դառնայ ձեր մշտական ուղեցոյցը»:



Իբրեւ վերջին հրահանգ, եղբ. Պօղոս Մահպուլեան թելադրեց. «Խստօրէն արգիլուած է ձեր եռանդը կորսնցել: Մի՛ վախնաք մեծ երազելէ: Երազելը շատ լաւ բան է: Մակայն պէտք է զգուշանալ, որովհետեւ... երբեմն-երբեմն երազները կրնան իրականանալ»:

«ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆԸ

Այս առիթով կատարուեցաւ ՀՄԸՄ-ի սկաուտական բարձրագոյն կարգի տուչութիւն 34 քոյր-եղբայրներու, որոնք անցնող երկուքուկէս տարիներուն առցանց դասախօսութիւններով, ապա՝ բանակումի ընթացքին մէկ օրուան վրայ երկարած յատուկ հանդիպումով տիրացան «Արարատեան» կարգի գիտելիքներուն, մշակեցին եւ գործադրեցին սկաուտական ծրագիրներ եւ ի վերջոյ արժանացան իրենց աշխատանքին արդար արգասիքը նկատուող «Արարատեան» կարգի փողկապին եւ մետալին, զորս փակման արարողութեան ընթացքին ստացան ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներու կողմէ:



ՀՄԸՄ-ՀԱՄԿ-Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԶԸ

ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի խօսքը փոխանցեց վարչութեան ատենապետ քոյր Սանտրա Վարդանեան: Ան նշեց, որ ընկալեալ սովորութիւն է եւ ՀՄԸՄ-ական բարձր գիտակցութեան դրսեւորում է կրկնել, թէ միութենական աշխատանքի համար պէտք չէ շնորհակալութիւն յայտնել, բայց եւ կը փափաքիմ ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի վարչութեան անունով շնորհակալութիւն յայտնել այն բոլոր ՀՄԸՄ-ականներուն, որոնք իրենց պարտականութեան բարձր գիտակցութեամբ, ամիսներ շարունակ եւ բանակումի ընթացքին, աշխատեցան Հայրենիքի եւ Արցախի այս չափազանց բարդ պայմաններուն մէջ կազմակերպելու եւ իրականութիւն դարձնելու համար համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումը:



Շարունակելով, քոյր Սանտրա Վարդանեան շնորհակալութիւն յայտնեց այն եզակի համախմբումին համար, որ կրնայ ապահովել միայն ՀՄԸՄ-ի նման համաշխարհային կազմակերպութիւն մը, եւ որուն շնորհիւ մենք՝ ՀՄԸՄականներս անգամ մը եւս փաստեցինք, որ Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը ո՛չ մէկ իրավիճակ եւ ո՛չ մէկ իշխանութիւն կրնայ սասանել: Մենք՝ ՀՄԸՄ-ականներս, ինչպէս բանակումին կարգախօսը կը յուշէ, խրոխտ ենք, խիզախ ենք եւ միշտ պատրաստ դիմագրաւելու մարտահրաւերները ու խնդիրները, աւելի մեծ եւ կարելոր նպատակներու իրագործման ճամբուն վրայ:

ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի ատենապետը մաղթեց, որ բանակողները Հայրենիքէն իրենց հետ տանին նոր լիցքեր, եռանդ ու խիւնդ, աւելի մեծ նուիրումով կատարելու ՀՄԸՄ-ականի իրենց պարտականութիւնները: «Կը փափաքիմ դարձեալ յիշեցնել, որ ձեզմէ իւրաքանչիւրը պիտի ըլլայ Հայաստանի եւ Արցախի ներկայացուցիչը իր շրջապատին մէջ՝ կոտրելով այն լռութիւնը, որ որդեգրուած է, բարձրաձայնելու այն խնդիրները, որոնք այս պահուն կը դիմագրաւեն մեր քոյրերն ու եղբայրները Արցախի մէջ եւ անդրադառնալու այն բոլորին, ինչ որ կը կատարուի մեր հայրենիքին շուրջ», հաստատեց քոյր Սանտրա Վարդանեան:

ՅՈՒՇԱՆՈՒԷՐՆԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄԸ

Փակման արարողութիւնը ընդգրկեց յուշանուէրներու բաշխում՝ քանի մը հանգրուանով: Նախ, բանակումին նշանակով յուշանուէրներ յանձնուեցան բանակումի օժանդակ մարմինի անդամներուն եւ բժշկական անձնակազմին: Ապա, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը յուշանուէրներու փոխանակում կատարեց մասնակից պատուիրակութիւններու խմբապետներուն հետ: Իսկ երրորդ հանգրուանով, Կեդրոնական Վարչութիւնը յուշանուէրներ յանձնեց բանակումի գործադիր մարմինի եւ խմբապետական կազմի անդամներուն եւ փակման արարողութեան ներկայ հիւրերուն:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆԻ ԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ԽՕՍԶԸ



Խօսք առաւ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան սկաուտականի ներկայացուցիչ եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեան եւ բանակումի իննօրեայ յայտագիրները ներկայացնելով յայտնեց, որ «Այս բոլորը կատարուեցան եւ պիտի շարունակուին կատարուիլ համա ՀՄԸՄ-ական մեծ ջանքով եւ շրջաններու հսկայական ճիգով, մէկ հիմնական նպատակ ունենալով՝ մեր մէջ միշտ վառ պահել հայու ոգին, հայութեան պատկանելիութիւնը, հայ մշակոյթը, հայ լեզուն եւ հայութեան եւ հայրենիքին համար գոհուած տղոց յիշատակը»:

Եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեան յատուկ կերպով յիշեց ՀՄԸՄ-ի Արցախի սկաուտները, որոնք թշնամական պաշարումի պատճառով զրկուեցան բանակումի մասնակցութեան իրաւունքէն: Ան ըսաւ. «Արցախի՝ սկաուտներ, դուք մեր առօրեայ հանդիպումներուն, աշխատանքներուն, խարուկահանդէսներուն ընթացքին հոգիով ու սրտով մեզի հետ էիք, յոյսով ենք, որ յառաջիկայ ծրագիրներուն անպայման կը միանանք ֆիզիքապէս»: Եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեան գնահատեց նաեւ բանակումի յաջողութեան համար ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի ի գործ դրած ճիգերը եւ դրուատիքի խօսքեր արտասանեց բանակողներուն, որոնք կարողացան շաղուիլ յատուկ խնամքի կարօտ «Հրաշք» պատանի եւ երիտասարդ տղոց ու աղջիկներուն հետ, ստեղծել ընկերային մթնոլորտ եւ սկաուտական ոգիով գործակցիլ միասնաբար:



Ապա, եղբ. Ֆէտի Խաժակ Գազանճեան շնորհակալութիւն յայտնեց բանակումի յաջողութեան նպաստած խմբապետական կազմին եւ գործադիր մարմնի խմբապետներուն, որոնք «աշխատեցան եւ ծառայեցին անխնայ, բանակումի ընթացքին ստեղծեցին ամուր շղթայ մը, գոր երբեք կարելի չէր կտարել՝ ի պատիւ իրենց մէջ տիրող համագործակցութեան ոգիին. անոնք ի սպաս դրին իրենց բոլոր գիտելիքները եւ փորձառութիւնները, զորս ստացած էին իրենց շրջաններէն եւ համա-ՀՄԸՄ-ական 12րդ բանակումը յաջողուցին եւ յաջողեցան»:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Փակման արարողութեան եզրափակիչ պատգամը փոխանցեց ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Վաչէ Նանարեան:



Պատգամին սկիզբը եղբ. Վաչէ Նանարեան նշեց, որ «Փակման այս արարողութիւնը պարզապէս հրաժեշտ չէ, այլ՝ ՀՄԸՄ-ի աշխարհասփիւռ համակիրներուն համար վկայութիւն է, հաստատում է ՀՄԸՄ-ի հանդէպ ցուցաբերուող ազգային միասնութեան եւ հաւատքին, ՀՄԸՄ-ի աշխատանքներուն հանդէպ մեծ վստահութեան՝ Հայրենիքի, Արցախի թէ՛ Սփիւռքի զանազան գաղութներուն մէջ»:

Կեդրոնական Վարչութեան ատենապետը այս առիթով շնորհակալութիւն յայտնեց բանակումի խմբապետական կազմին, ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի վարչութեան, բանակումի օժանդակ անձնակազմին, սկաուտական «Արարատեան» կարգի կազմակերպիչ կորիզին եւ բանակումի մասնակից շրջաններու պատուիրակութիւններու պատասխանատուներուն, որոնց բոլորին միասնական եւ հսկայական ճիգերով կարելի եղաւ սկաուտական եւ միութենական այս մեծ իրագործումը կատարել: Եղբ. Վաչէ Նանարեան չնոցաւ յիշելու նաեւ ՀՄԸՄ-ի Արցախի սկաուտները, անոնք՝ որոնք «իրենց գոյատեւումով օրինակ են մեր բոլորին եւ կը շարունակեն արժեւորել պայքարի խորհուրդը եւ ազատ, անկախ ու ամբողջական Հայաստանի մեր յաւերժական տեսլականը»:

Walibi Holland



Միութեանս խմբապետական կազմի կազմակերպութեամբ 2 Յուլիս 2023 Թ.ին , տեղի ունեցաւ սկաուտական պտոյտ դէպի Հոլանդական Վալիպի «Walibi Holland» խաղավայր:

Պտոյտին ժամանակող սկաուտները օրուայ ընթացքին կարողացան ստեղծել գեղեցիկ եղբայրական յիշողութիւններ



Ալմեյո եւ Համա- Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ ընդհանուր սկաուտական բանակում



Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո Մեկուսի Ծրջանի սկաուտները իրենց մասնակցութիւնը բերին Համա- Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ ընդհանուր սկաուտական բանակումին որը տեղի ունեցաւ «20-28 Յուլիս» Հայաստանին մէջ.

Մասնակցութեան պատուիրակութիւնը կազմուեցաւ «9 սկաուտներէ եւ մէկ խմբապետ » 10 սկաուտներէ:

«Պատուիրակութեան ղեկավար» եղբայր Յակոբ Գասպարեանը յուլիսի 18-ին մեկնեց Հայաստան, իսկ պատուիրակութեան միւս անդամները՝ յուլիսի 19-ին:

Միութեանս համար այս տարուայ մասնակցութիւնը նման չէր նախորդ մասնակցութիւններուն , ուր միութեանս սկաուտական ընդհանուր խմբապետ եղր. Յ.Գասպարեանը մեկնած էր իր Արարատեան կարգի թեկնածութեան վերջին « գործնական» հանգրուանը կատարելու նպատակով:



Արարատեան կարգը Ալմեյո բերուեցաւ

Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո Մեկուսի Շրջանի պատմութեան մեջ առաջին անգամ Հ.Մ.Ը.Մ.ական բարձր Արարատեան Կարգի աստիճանը ստանալու կապակցութեամբ : Միութեանս վարչութիւնը , սկաուտական խորհուրդը եւ միութեանս սկաուտական խմբապետական կազմը բարձր հպարտութեամբ եւ գնահատանքի կշնորհաւորէ միութեանս սկաուտական ընդ. Խմբապետ Եղբ. Յ.Գասպարեանին . Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական Արարատեան կարգը ստանալու համար:

Վարձրը կատար Եղբ. Գասպարեան :



Սկաուտական վերամուտ



Կիրակի 3 սեպտեմբեր տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո մեկուսի շրջանի սկաուտական վերամուտ . օրուայ հաւաքին նաեւ Համա Հ.Մ.Ը.Մ.ական 12րդ բանակումի պատուիրակությունը ներկաներուն, լուսանկարներով ներկայացուց յիշեալ բանակումին տեղի ունեցած իրադարձությունները :

Վարչությունը օրուայ հաւաքին բարձր գնահատանքներով ներկաներուն ներկայացուց Արարատ կարգի աստիճան ստացուած «Հ.Մ.Ը.Մ. Ալմեյո-ի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով» Եղբ. Յակոբ Գասարեանին :





Սրահի ոտնագնդակի մրցաշար

2022-23 Թ.ի Տարեշրջանի վերջին եռամսեայ KNVB ֆութբոլի շրջանային մրցաշարերու արդիւնքները .-

Ա.Հ.Մ.Ը.Մ. 1 (Homentmen 1) Կը մրցակցի 2րդ բաժանում աստիճանի խումբերու հետ .

- Drienerlo 2 vs Homenetmen Almelo 1 1 - 2



Բ. Հ.Մ.Ը.Մ. 2 (Homentmen 2) Կը մրցակցի 4րդ բաժանում աստիճանի խումբերու հետ

-Homenetmen 2 vs EBZV 2 - 2

29 Սեպտեմբեր 2023

Հ.Մ.Ը.Մ Ալմելո-ի սրահի ոտնագնդակի 2-րդ խումբը իր այսօրուայ մրցաշարքի սկիզբին . երկու խումբերը Հ.Մ.Ը.Մ Ալմելո 2 եւ EBZV-ը մէկ վայրկեան լուրջամբ կանգնեցան ի յարգանք Արցախի եւ հայ ժողովրդի նահատակներու յիշատակին:

Օրուայ մրցումը աւարտուել է 2-2 հաշուով:






Georganiseerd door de sportcommissie van Homenetmen Almelo

SPORTDAGEN



VOLLEYBAL

 JONGENS & MEISJES

 01-06-2023



KINDERVOETBAL

 JONGENS & MEISJES
6 T/M 13 JAAR

 08-06-2023



BASKETBAL


 JONGENS & MEISJES

 15-06-2023



VOETBAL


 MANNEN VANAF 30 JAAR

 22-06-2023



BASKETBAL / VOLLEYBAL

 VANAF 50 JAAR

 29-06-2023



**HOMENETMEN ALMELO (VREJ CHATALIAN ZAAL)
BURGEMEESTER SCHNEIDERSSELINGEL 21, 7602 RK**



19:30 UUR



MELD JE AAN VIA 0619000833 !



Together we build the future



It`s time! Donate and together we got through !

Dear compatriot , brothers and sisters,

The construction of our new association building is end!

In order to perpetuate it and to maintain the project, additional (unexpected) costs still had to be covered.

Once again we appeal to you and ask for your generous donations to successfully maintain our new building.

Donations can be made by bank transfer to the following account number:

EN 83 RABO 01 0335 3683 for the Homenetmen foundation o. v. "

Donation New Build Homenetmen "

For cash donations please contact +31-614286355

*Together we
build the future*





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ⇒ Լոյս տեսաւ Մարգիկ 43-րդ տարի Թիւ 429.
- ⇒ Գրիգոր Մարէգեան Հ.Մ.Ը.Մ. ի թանգարանին կը նուիրէ Ադեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. « Կանքի»ի 2000 նկարներու իր մեծարժէք հաւաքածուն.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.ի քարոզչական քարտերու պատրաստութեան սեմինարը աւարտուեցաւ.
- ⇒ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի նախապատրաստական աշխատանքներ .
- ⇒ Այս շաբաթավերջին Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումին բարձունք Բիրականի մէջ.
- ⇒ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումին ծանօթացման մամլոյ ասուլիսը.
- ⇒ Հ.Մ.Ը.Մ.-ի Արցախի սկսուածներու բացակայութեամբ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումին բացումը ` «ԽՐՈԽՏ, ԽԻՉԱԽ, ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ» նշանաբանով.
- ⇒ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումի մասնակիցներուն յարգանքի տուրքը Եռարյուրի եւ Ծիծեռնակաբերդի մէջ.
- ⇒ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդբանակումը աւարտուեցաւ հայրութեան «ԽՐՈԽՏ, ԽԻՉԱԽ, ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ» կամաւոր բանակը մնալու յանձնառութեամբ.
- ⇒ Walibi Holland.
- ⇒ Ալմէյօ եւ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ ընդհանուր սկսուածական բանակում.
- ⇒ Արարատեան կարգը Ալմէյօ բերուեցաւ .
- ⇒ Սկսուածական վերամուտ
- ⇒ Սրահի ոռնսզնդակի մրցաշար.
- ⇒ Բովանդակութիւն .

Հասցէ : Burgemeester Schneiderssingel 21 , 7602 RK - Almelo
Կայք էջ . Website : homenetmenalmelo@yahoo.nl
: <https://stichtinghomenetmen.nl/>
Facebook : Homenetmen Almelo / ՀՄԸՄ Ալմէյօ
Instagram : [homenetmenalmelo](https://www.instagram.com/homenetmenalmelo)

Առաջարկներու համար կը խնդրուի կապ հաստատել (homenetmenalmelo@yahoo.nl) -